ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

«Սրբավայրը ուխտատեղի է այնքան ժամանակ,
քանի դեռ ուխտավոր ունի...»
(ժողովրդական)

Պատմական Հայաստանի ամեն բնակավայր, ավեր եկեղեցի ու մատուռ, ամեն լեռ ու հարթավայր, անգամ ամեն կածան սրբատեղի է կորուսյալ երկրի կարոտն ապրող յուրաքանչյուր հայի համար: Մեր ուխտավորության բոլոր օրերին մեզանից յուրաքանչյուրն իր պապենական երկրի՝ քաղաքի, գյուղի տեսլականով էր ապրում: Դա առավել խտացված ու շոշափելի դարձավ, երբ անցանք Ախալցխայի անցակետը: Ամեն մեկը հաշվում էր անցնող կիլոմետրը՝ «Մինչև Կարս 200 կիլոմետր է...»: «Մինչև Բինգյոլ մնացել է…»: «Մինչև Մուշ…»: «Մինչև Իգդիր մնաց…»:

Իգդիր հասնելուն անհամբերը բժշկուհին է, տարեց մի կին, որ ծնկին պահում է վարդապետ պապի լուսանկարը, խունացած փաստաթղթեր՝ պապի տան հասցեով, սեփականությունը վկայող գրությամբ: Այդքանը՝ փաստաթղթերում, իսկ հիշողության մեջ՝ պապից հորը, ապա և հորից իրեն անցած բանավոր «տեղեկանքը» տան տեղի մասին: Միամի՛տ կին՝ հույս ունի, թե տունն անվնաս կգտնի, կհասցնի ծածուկ փորել «տեղեկանք»-ի նշած վայրը, և մասունքներ գտնել: Բայց քանի որ իրապես միամիտ էր ու դյուրահավատ, շտապեց քուրդ ուղեկցողի հետ զրույցի բռնվել, որի արդյունքում՝ ուղեկցողի անմիջական առաջարկը. «Այդ որոնումներն անենք միասին»: Բժշկուհու համար այդ միասինը նշանակում էր, որ իրեն պարզապես օգնում են, և ինքը շնորհակալ կլինի դրա համար: Առաջարկողի համար դա դեպի երևակայական գանձը գնալու միջոց էր: Քուրդ ուղեկիցը հաճախ էր լսել, որ ժամանակին այստեղից գաղթած հայերը գանձեր են պահել իրենց տներում, այգիներում. այդ երկրի ցանկացած քաղաքում, ցանկացած գյուղում եկվոր հայի հայտնվելը յուրաքանչյուր տեղաբնակի մոտ առաջացնում է մեն մի տրամադրություն՝ «Հայերն այստեղ իրենց պապերի թաղած ոսկին են փնտրում»: Բժշկուհին գանձի մասին ոչ պատկերացում ուներ, ոչ էլ մտածում էր՝ նա իր պապի տունն էր ուզում գտնել: Ահա այսպես, նրանց միջև պայմանը կապվեց, և մեր խմբի ուղեկիցը քաղաքից ինչ-որ մարդկանց գտավ ու ծանոթացրեց բժշկուհու հետ՝ հավաստիացնելով, թե այս մարդիկ ծանոթ են հին քաղաքին, ու նրանց միջոցով հեշտ է գտնել ցանկալի հասցեն: Նրանք միասին հեռացան, ինչպես արկածային գրքերում է նկարագրվում՝ մեզ ապսպրելով սպասել: Մենք սկզբից չհասկացանք, թե ինչու չէր կարելի, որ ամբողջ խմբով գնայինք իրենց հետ, բայց երբ երկժամյա բացակայությունից հետո նրանք վերադարձան՝ ուղեկցողի աչքերին անթաքույց փայլ, բժշկուհու աչքերին՝ արցունքներ, արդեն հասկանալի էր, որ արկածային այդ սյուժեի ավարտին բժշկուհին վերջնականապես կորցրել է իր պապի տունը գտնելու հույսը, իսկ ուղեկիցն արդեն առիթ ունի ուրախանալու՝ մեզանից «պրծնելուց» հետո: Բժշկուհու արցունքները գերդաստանի ավագի ոտնահետքերի կորստյան հետ հաշտվելու արցունքներ էին:

Հաջորդ տեսլականի տերը տիկին Վալենտինան էր, ով Այգեստանում պապենական տունն էր փնտրում՝ այստեղ՝ Տուշպայի հզոր ամրոցի հարևանությամբ: Նոր Վանը Այգեստանից հեռու է կառուցված՝ Եվրոպական քաղաք դառնալու հավակնություններով: Իսկ

երբեմնի ամրոցում մեր նախնիների դամբարանն է ու՝ անթիվ արձանագրություններ, որ

փորագրված են մարմարե ժայռերի վրա: Այդ սեպագրերի «հեփնորդները» հայտնաբերվեցին նաև Կարմիր բլուրում՝ որպես վկայություն Երևան քաղաքի հիմնադրման: Վկայության հեղինակ Արգիշտի Ա արքան Բիաինի արքայատոհմից էր (ք.ա. 9-6 դդ.), այդ տոհմի 5-րդ արքան՝ Արամեից, Սարդուրից, Իշփուինից և Մենուայից հետո: Այդ նրա անվան հետ է կապվում այսօրվա մեր մայրաքաղաքի՝ Երևանի ծնունդը:

Ահա, ուրեմն, տիկին Վալենտինան ամրոցի բարձունքից նայում էր Այգեստանին, ավելի շուտ նախկին Այգեստանի տարածքին և սիրտը ճմլվում էր այդ դատարկությունից:

Տիկին Վալենտինա Ներսիսյանը նախ իր մորական տատի պատմություններով ճանաչեց Վանը: Հետո ինչքա՜ն գրականություն թերթեց, որ առավել որոշակի պատկերացնի այն հրաշալի երկիրը, ուր ապրել են իր նախնիք և ստիպված տարագրվել Արևելյան Հայաստան: Տատը ի՜նչ լուսեղեն հավատ ուներ. «Վալյա ջան, տեսնիս, թե բան է, Էրգիր տան մըզի, ինձի ըստեղ ցթողիս՝ կտանի՛ս, իմ Խաչփողան փողոց, մեր շեն տուն»:

Միամի՛տ տատ, ի՜նչ երազներով էր ապրում ու դրանց իրական դառնալու հավատով էլ հեռացավ այս կյանքից: Տիկին Վալենտինայի մխիթարանքն ի՞նչ պիտի լիներ՝ այցելել Վան: Տատի երազանքը մե՛ծ երազանք էր՝ «Թե բան է, Էրգիր տան մըզի…», բայց գոնե նրա ոտնահետքերով անցնելը թոռան պարտքն էր, որ կատարեց՝ այդ «եղեմական աշխարհում» (տատի բառերն էին) լինելով: Մեկ-երկու օր, բայց դա մի ամբողջ կյանք էր, մի հավերժություն, որ անցավ այդ ճանապարհներում. «Ասես տատիս թևանցուկ գնում էի, ասես նա էր ինձ մեկ առ մեկ պատմում մեր գերդաստանի մասին, Այգեստանում ապրողների նիստ ու կացի, սովորույթների, երգի, պարի, հանդեսների մասին: Այսպես, տատիս թևանցուկ, ես անհույս որոնեցի նրանց ապրած Խաչփողան փողոցը, բայց Այգեստա՞ն էր մնացել»:

Այգեստանը չկար, փողոցն ու տունը չկային… հողը հո՞ կար: Հողը, որ հերոսական Վանի քանի՛ նահատակների նշխարների հետ է զրուցում ու նոր եկողներին չի կարողանում պատմել:

Տիկին Վալենտինան հորինեց իր այդ հեքիաթը, իր լուսեղեն հեքիաթը՝ հողի և նահատակների նշխարների զրույցի մասին: Հորինեց ու պատմեց. «Այգեստանի հողն իր պատմությունը միայն բնիկներին է պատմում: Ես որ բերեցի այն մի բուռ հողը և շաղ տվի տատիս շիրիմին, հողն ու նշխարները սկսեցին իրար հետ զրուցել, և տատիս տված իմ խոստումը ինչ-որ չափով կատարված համարեցի»:

– Ինչո՞ւ ինչ-որ չափով:

– Բա այն մի ցանկությունը՝ «Թե էրգիրը մեզի տան…»: Թե իմ աչքերով չտեսնեմ այդ երանելի օրը, ձեր աչքերով կտեսնեմ:

Այսպես, Համո Սահյանի տողերով ավարտեց զրույցը տիկին Վալենտինան:

Տուշպայի այս վիթխարի ամրոցին այսօր մի, այսպես ասած, պահակ է կարգված, ով մեզ հատուկ ուղեկցում է ամրոցից Վանա ծովակ իջնող ստորգետնյա հորի մուտքի մոտ ու շշուկով, իբր մեծ գաղտնիք պարունակող և հավաստիություն արտահայտող խոսք, ասում է. «Մյուս անգամ, երբ գաք, ձեզ հետ ականորսիչ սարք բերեք. միասին իջնենք այս հորը, ես վստահ եմ, որ այնտեղ ոսկի կա»: Պետք է կարծել, որ նա բոլոր այցելուներին էլ այդ կերպ դիմում է:

Շարունակելի